«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Դեռահասության տարիքում ագրեսիայի և ինքնաագրեսիայի առանձնահատկություններն ու դրսևորումները դպրոցում

Հետազոտող ուսուցիչ՝ Հասմիկ Սարգսյան

անուն, ազգանուն

Արմավիրի N4 ավագ դպրոց ՊՈԱԿ

դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Շուշան Վարդանյան

անուն, ազգանուն

ԱՐՄԱՎԻՐ- 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Գրական ակնարկ 5

Հետազոտությանընթացք.....9

Ա. Բասսի և Ա. Դարկի<<Ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման>>մեթոդկիա……..……18

Եզրակացություն.....20

Օգտագործվածգրականությանցանկ……..……21

Ներածություն

Դեռահասության շրջանը մարդու կյանքի ամենադժվարին, հակասական, և բեկումնային իրադարձությունների ժամանակահատվածն է: Տարիքային այս փուլում տեղի են ունենում խորը փոփոխություններ, որոնք էական ազդեցություն են ունենում երեխայի անձի ձևավորման և զարգացման վրա: Դեռահասի անձի զարգացման հիմախնդիրը ոչ միայն հոգեբանամանկավարժական, այլ նաև սոցիալական կարևորագույն խնդիր է: Հենց այս տարիքում է մարդն անցնում իր զարգացման կարևորագույն ուղին՝ հաղթահարելով ներքին և արտաքին բազմաթիվ կոնֆլիկտներ:Հենց այս տարիքի կարևորագույն խնդիրներից է համարվում ագրեսիվ և աուտոագրեսիվ վարքը, և անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրելու <<ագրեսիա>>, <<աուտոագրեսիա>> հասկացությունները, դրանց վարքային դրսևորումները:

Ժամանակակից հասարակության հիմնական խնդիրներից մեկը ագրեսիվության և բռնության բարձր մակարդակն է: Այս խնդիրըբազմիցսհետազոտվելէ և հաճախ մարդկանց և կենդանիների ագրեսիան հավասարվում է բնության մեջ: Բայց մարդը դաժանության ավելի բարդ դրսևորում ունի: Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում հասարակության կյանքը կտրուկ փոխվեց: Մեր հասարակությունը, որն անցել է շուկայական հարաբերությունների, մեծապես փոխվել է, և դրա հետ մեկտեղ մարդկանց բարոյական նորմերն ու սկզբունքները մի շարք փոփոխություններ են կրել: 20-րդդարիերկրորդկեսինտեղիունեցածմիշարքերևույթներ, օրինակ, հանցագործության, ահաբեկչության և գրեթեանխափանզինվածտարածաշրջանայինհակամարտություններիզգալիաճընպ աստելէայսխնդրիարդիականացմանը: Նման տեսակի բոլոր փոփոխությունները իրենց հսակայական ազդեցությունն են թողնում հատկապես դեռահասության տարիքում գտնվող անձանց վրա, որի պատճառների մասին ավելի մանրամասն կխոսենք առաջին գլխում:

Դեռահասության տարքի ագրեսիան և աուտոագրեսին արտացոլում են հասարակության կարևորագույն խնդիրներից մեկը: Վերջին տարիների ընթացքում կտրուկ բարձրացել են դեռահասների կողմից կատարված հանցագործությունների թիվը ինչն էլ մտահոգիչ և արդիական խնդիր է մեր ժամանակաշրջանում, որը կրում է համաշխարհային բնույթ:Ներկայումս դեռահասների շրջանում ագրեսիվության մակարդակի բարձրացմանն են նպաստում նաև ալկոհոլի, ծխախոտի ազատ վաճառքը, որոնք նպաստում են ադիկտիվ վարքի դրսևորումներին՝

ալկոհոլամոլությանը, տոկսիկոմանիային, ինչպես նաև հակահիրավական և հակասոցիալական վարքին: Ագրեսիվ վարքի դրսևորմանն են նպաստում նաև բոլոր տեսակի բռնությունները դեռահասների նկատմամբ, որոնց թիվը վերջին ժամանակներս ավելացել է: Դեռահասները հաճախ դառնալով բռնության զոհ վախի, ամոթի և նմանատիպ այլ պատճառներով թաքցում են իրենց հետ կատարվածը, ինչն էլ հետագայում իր ազդեցությունն են ունենում դեռահասի վարքագծի վրա:

Ներկայումս դեռահասության շրջանում ավելի մեծ տարածում է գտել նաև ինքնավնասման վարքը, որը իրենից բավական մեծ խնդիր է ներկայացնում, քանի որ դրա հետևանքները անկանխատեսելի են և կարող ենանդառնալիլինել: Աուտոագրեսիայի վարքային դրսևորումներից մեկը սուիցիդն է: Սուիցիդի խնդիրը համաշխարհային բնույթ է կրում, չնայած նրան, որ սուիցիդի ցուցանիշը ԱՊՀ երկրների մակարդակով ցածրերից մեկն է Հայաստանում, միևնույնն է նման փոքր բնակչությանունեցող երկրում նմանատիպ խնդիրը բավական լուրջ է և արժանի մեծ ուշադրության:

Դեռահասների ագրեսիվ և ինքնաագրեսիվ վարքը բավական խնդրահարույց է ժամանակակից աշխարհում, այդ իսկ պատճառով մեծ ուշադրություն է դարձվում խնդրի լուծման ուղիների որոնմանը և կանխարգելմանը:

Շուրջ 28 տարի է ունեմ մանկավարժական փորձ և յուրաքանչյուր տարի բախվում եմ դեռահասների ագրեսիայի և ինքնաագրեսիայի արտահայտման տարբեր տեսակների հետ: Հետազոտական աշխատանքումս ներկայացնում եմ 2021-2022 ուստարվա 10-րդ դասարանում առկա խնդրի կոնկրետ դեպքի վերլուծությունը:

Հետազոտության նպատակն է մշակել թեմայի վերաբերյալ համապատասխան գրականություն, ուսումնասիրել դեռահասների ագրեսիվ և ինքնաագրեսիվ վարքի դրսևորման առանձնահատկությունները դպրոցում:

Գրական ակնարկ

Դեռահասության փուլը ընդգրկում է 11-12 տարեկանից 15-17 տարեկանը:Այս փուլը կարևորվում է նրանով, որ այստեղ դրվում է անձի բարոյական և սոցիալական հիմքերը: Այս տարիքում դեռահասի օրգանիզմում կատարվում են նաև կենսաբանական փոփոխություններ: Սկսվում է պուբերտացիոն շրջանը:

Այս ընթացքում ձևավորվում են անձի բարոյական, հասարակական ընկալումը, վերաբերմունքը իր, շրջապատի մարդկանց և առհասարակ հասարակության նկատմամբ: Դեռահաս աղջիկը փորձում է ընդօրինակել այն կնոջ կամ աղջկա վարքը, ով շրջապատում ունի մեծ հեղինկություն, և ըստ այդմ էլ, նմանակում է տվյալ անձի հագնվելու ոճը, սանրվածքը, հարդարանքը, պահելաձևը, բառապաշարը և այլն: Իսկ տղա դեռահասի համար ընդօրինակման օբյեկտ է դառնում նա, ով իրեն պահում է <<իսկական տղամարդու նման>>, ցուցադրում է մեծ կամքի ուժ, քաջ է, համբերատար, կարողանում է լավ ընկեր լինել:

Դեռահասության տարիքում օրգանիզմը լուրջ ֆիզիոլոգիական փոփոխությունների է ենթարկվում: Սկսվում է սեռահասունացումը, մոտավորապես 11 տարեկանում ակտիվորեն սկսվում են արյան մեջ արտադրվել հորմոններ, տղամարդկանց մոտ անդրոգեն հորմոններ, կանանց մոտ՝ էստրոգեն: Փոփոխվում է ոսկրային համակարգը, ինչն էլ իր հերթին դեռահասին դժվարությունների առաջ է կանգնեցնում: Երեխան անընդհատ ստիպված է լինում հարմարվել իր օրգանիզմում կատարվող լուրջ փոփոխություններին: Դեռահասութայն շրջանում նկատվող կենսաբանական ցուցանիշների լուրջ փոփոխությունները անդրադառնում են դեռահասի արտաքին տեսքի վրա, որոնք կարելի է բնութագրել որպես երկրորդային սեռական հատկանիշներ: Հատկապես դրոևորվում են հասակի խիստ ավելացմամբ, մարմնի մկանային և ճարպային զանգվածի մեծացմամբ, վերջինս իր վառ արտացոլումն է ստանում դեռահասի արտաքինի վրա: Եվ մարմնի որոշ հատվածների տգեղությունը, անահամաչափ դիմագծերը, ճարպային գոյացությունների ի հայտ գալը դեմքի վրա, գիրությունը խորապես ազդում է դեռահասի հոգեվիճակի վրա, ինչի հետևանքով նրա մոտ կարող է առաջանալ թերարժեքության բարդույթ, դեպրեսիա, դիսմորֆիֆոբիա, նույնիսկ նևրոզ: Սեռական հասունացման սկիզբը մեծ չափով կախված է բնակլիմայական պայմաններից, ազգային գործոններից, ինչպես նաև դեռահասի կյանքի անհատական առանձնահատկություններից՝ առողջական վիճակ, հանգստի վիճակ և այլն: Հիշյալ առումով էլ պետք է հավելել, որ աղջիկների սեռական հասունցման սկիզբը կարելի է համարել 11-12, իսկ տղաներինը 12-13 տարեկանը:

Դուրս գալով մանկությունից, բայց դեռևս մուտքչ գործած հասունության շրջան՝ դեռահասը հանդիպում է հասարակության կողմից ներկայացվող դեռևս բոլորովին նոր, ոչ մանկական սոցիալական պահանջների և ստիպված լինում ստանձնել նոր դերեր: Այս փուլում դեռահասը կանգնում է մի մեծ խնդրի լուծման առջև՝ միավորել և վերլուծե լմինչ այժմ ունեցած պատկերացումներն անձի մասին և ինտեգրել սեփական Ես-ի մասին բազմաթիվ պատկերները մեկ միասն ականպատկերի մեջ:

Ճգնաժամի հաղթահարման դեպքում դեռահասը ձեռք է բերում մի շարք կարևոր նորագոյացություններ՝ սեփաքկան Ես-ի գիտակցում, ինքնահասկացում, սեփական անհատականության գիտակցում, ինքնագիտակցության զարգացում: Դեռահասը ձեռք է բերում <<հասունության>> զգացում, կողմնորոշվում իր սոցիալական դերերում, գտնում իր տեղը շրջապատում: Դեռահասի համար հաղորակցումը տեղեկատվություն ստանալու ճանապարհ է: Այն ինչպես գործունեության առանձնահատուկ ձև է, միևնույն ժամանակ, միջանձնային հարաբերությունների հաստատման միջոց:

Դեռահասությունը մանկության և հասունության միջև օնտոգենետիկական զարգացման շրջանն է, (11-12, 16-17 տարեկան), որը բնութագրվում, հատկանշվում է որակական փոփոխություններով՝ կապված սեռական հասունացման և <<մեծահասակների աշխարհ>> մուտք գործելու հետ: Այս շրջանում անձն ունենում է բարձրացված դյուրագրգիռություն, իմպուլսիվություն, որի հիման վրա էլ հաճախ ձևավորվում են անգիտակցական սեռական հակումներ: Դեռահաության տարիքում հոգեկան զարգացման հիմնական լոկոմոտիվները հանդիասնում է Ես-կոնցեպտի փոփոխությունները, նոր, դեռևս անկայուն ինքնագիտակցության ձևավորումը, ինքն իրեն և իր հնարավորությունները ճանաչելու փորձը: Այս տարիքում տեղի է ունենում վերլուծահամադրական գործողությունների բարդ ձևերի կայացումը, վերացական մտածողության ձևավորումը: Անչափ կարևոր նշանակություն ունիդ եռահասի՝ հատուկ <<դեռահաս>> հանրույթի պատկանելիության զգացման առաջացումը, արժեքների գիտակցումը, որոնք հիմք են հանդիսանում նրա սեփական բարոյական գնահատականների համար: Դեռահասության տարիքի հոգեբանական կարևորագույն բնութագիրը անձնավորության ինտենսիվ բարոյական ձևավորումն է, բարոյական գիտակցության ձևավորումը, վարքի բարոյաէթիկական նորմերի տիրապետումը: Այս տարիքում տեղի է ունենում ոչ միայն ֆիզիկական հասունացում, այլն ևևանձնավորության ակնառու հասունացում, որն իրականանում է շրջապատող իրականության ազդեցությունների ուղեկցությամբ, դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքի պրոցեսում: Այս շրջանը աշխարհայացքի, բարոյական համոզմունքների, սկզբունքների ու իդեալների,

գնահատման դատողությունների ձևավորման տարիք է, որոնցով դեռահասը սկսում է առաջնորդվել իր կյանքում: Դեռահասությունը անձի զարգացման տեսակետից համարվում է ամենաբարդ շրջանը:

Դեռահասության տարիքում դրսևորվող կամակորությունը հաճախ կապված է սկզբունքայնության, անկախության և ինքնուրույնության մասին ունեցած սխալ պատկերացման հետ: Դ. Ֆելդշտեյնը հետզատելով դեռահասների բարոյական հասկացությունների էությունը հանգեց այն եզրակացության, որ դեռահասների կողմից բարոյական կատեգորիաների ըմբռնումը կրում է ձևական, մակերեսային բնույթ: Հոգեբաններն ուսումնասիրել են մի կողմից դեռահասների մեջ ձևավորվող համոզմունքների, բարոյական գաղաբարների, հասկացությունների, դիրքորոշումների և, մյուս կողմից, նրանց արարքների, գործողությունների, կոնկրետ վարքագծի միջև եղած հարաբերությունները: Ա. Լ. Մալիվիանով նայդ տեսակետից դեռահասներին բաժանել է չորս խմբի.

1.դեռահասներ, որոնք իրենց վարքում ղեկավարվում են իրենց կողմից լավ գիտակցված դրական բարոյական նորմերով, և որոնց մոտ խոսքի և գործի միջև հակասություն չկա,

2.դեռահաներ, որոնց մոտ համընկնում են բարոյական հասկացությունների զարգացման ցածր մակարդակն ու վարքը

3.դեռահասների մի փոքր խումբ առանձնանում է վարքի բարոյական նորմերի իր քաջատեղյակությամբ, բայց իր համար անհրաժեշտ չի համարում վարվել ըստ այդ նորմերի.

4. դեռահասներ, որոնք դեռևս չեն տեսնում, չեն հասկանում այն կապը, որ գոյություն ունի իրենց հայտնի բարոյականության պահանջների և իրենց առօրյա արարքների միջև:

Անձի զարգացման դժվարությունները այս տարիքային փուլում ուղեկցվում են միայնության զգացումով: Հետևաբար դեռահասի մեջ անհագցանկություն է առաջանում անընդհատ լինելու ընկերների հետ՝ հույս ունենալով գտնել այն, ինչ նրանց արգելում են ծնողները՝ անմիջականություն, կարևորագայն զգացողություն և ձանձրույթը փարատելու տարբեր միջոցներ: Դեռահասի համար կարևոր է ոչ միայն լինել ընկերների շրջապատում, այլև զբաղեցնել ցանկալի կարգավիճակ: Ոմանց համար կարևոր է անպայման իշխող դիրք գրավել խմբում, մյուսներին բավարաում է պարզապես ընկերների կողմից սիրված և ընդունված լինելու զգացողություն: Դեռահասի շփման բուն գործընթացը հետզհետե դառնում է առավել խորը և

բովանդակալից, ընդլայնվում է նրանց հոգևոր և մտավոր հաղորդակցումը, առաջանում են հուզական հաղորդակցման տարբեր ձևեր՝ ընկերություն, սեր:

Հետազոտությանընթացք

Դեռահասության տարիքային շրջանը տարբեր գրականության մեջ տարբեր անվանումներ է գտել՝ դեռահասություն, անցումային, պուբերտանտային շրջան, սեռական հասունացման, տարիքի բացասական փուլ և այլն: Տարբեր անվանումները արտացոլում են դեռահասի տարիքային տարբեր առանձնահատկությունները: Դեռահասության տարիքի առանձնահատկությունն այն է, որ մարդը մտնելով այս փուլ որպես երեխա, դուրս չի գալիս չափահաս դարձած: Այս փուլում անցնում է կատարվում մանկությունից դեպի հասունություն:

<<Խնդիր լուծելը բանականության՝ մտքի առանձնահատկություն է, այն միայն մարդուն տրված հատուկ շնորհ է, ուստի խնդիր լուծել իրավամբ համարվում է մարդկային գործունեության ամենաբնորոշ դրսևորումներից մեկը>>,- նշում է մեր ժամանակների խոշոր մաթեմատիկոս Ջ. Պոյանը: Խնդիր լուծելու կարողությունը զուտ գործնական արվեստ է. Ինչպես լողալը, դահուկներով սահելը կամ դաշնամուր նվագելը: Այդ արվեստին կարելի է տիրապետել միայն ընդօրինակելով լուծված խնդիրների նմուշները և մշտապես վարժվելով: Իսկ ինչ եղանակներով կարելի է հասնել այս նպատակին, եթե դասարանում կան ագրեսիվ և կամ աուտոագրեսիվ վարքագծով աշակերտներ: Ավագ դպրոցի սկզբնական շրջանը բավական բարդ է սովորողի համար, քանի որ կան հարմարման, ինքնահաստատման, ճանաչման և այլ խնդիրներ, որոնք կարող են հանգեցնել դասարանի կամ դպրոցի ներսում որոշակի խնդիրների առաջացմանը և վարքային փոփոխություններին:

Օրինակ՝ 2021-2022 ուստարում նոր ձևավորված դասարանումծանոթանալով աշակերտների հետ բացահայտեցի որոշակի անհանդուրժողականության դրսևորումներ 2 աշակերտների միջև, որոնց ագրեսիվ վարքը արտացոլվում էր նաև մյուս դասընկերների հետ շփման մեջ: Ուսումնասիրությունների հետևանքով պարզ դարձավ, որ խնդիրը նախապատմություն ուներ: Աշակերտները հիմնական դպրոցում եղել էին նույն դասարանի աշակերտներ, և վաղ դեռահասության շրջանում կոնֆլիկտի հետևանքով աշակերտներից մեկը փոխել էր դպրոցը: Պատահականության սկզբունքով նրանք հանդիպել էին ավագ դպրոցի նույն դասարանում:

Խնդիրը բացահայտելուց հետո որոշեցի աշակերտների միջանձնային հարաբերությունները շտկելու նպատակով իրականացնել մասնագիտական խմբային աշխատանքներ:

Առաջին խմբային աշխատանքի ընթացքում, որի թեման էր <<Իրական թվեր, գործողություններ իրական թվերի հետ>>, խմբերը ձևավորելիս յուրաքանչյուր

խմբում միտումնավոր ընդգրկեցի բարձր, միջին և ցածր առաջադիմություն ունեցող աշակեւտների: Աշխատանքը սկսելուց առաջ խմբերին հրահանգեցի, որ խմբի ներսում յուրաքանչյուր աշակերտ պետք է աշխատանքի ամբողջ ընթացքում մասնակցի, և ինչ որ խնդրի կամ թերանալու դեպքում բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները պետք է բացատրեն և օգնեն իրենց դասընկերներին, հակառակ դեպքում խումբը կգնահատվի ավելի ցածր:

Աշակերտները նախօրոք տեղեկացված չէին խմբային աշխատանքի մասին: Խմբային աշխատանքը սկսելուց մի քանի րոպե անց ագրեսիվ աշակերտներից մեկի մոտ սկսվեց վարքային նկատելի փոփոխություններ: Տվյալ աշակերտը սկսեց բողոքել, որ նա տեղյակ չի եղել խմբային աշխատանքի կատարման մասին, ես իրեն զգուշացրի, որ դա նպատակային է և արվում է տվյալ պահին իրենց գիտելիքները ստուգելու համար: Աշակերտը ոչմի կերպ չընկալեց հրահանգն ու բացատրությունը և սկսեց հարվածել ինքն իրեն և իրեն շրջապատող առարկաներին, ինչը ագրեսիայի և ինքնագրեսիայի դրսևորում էր: Այդ պահին արդեն զանգի հնչելու ժամանակն էր և ես պարզապես փորձեցի նրան հանգստացնել ավելի չհրահրել ագրեսիվ վարքը: Հաջորդ օրն տվյալ աշակերտը մոտեցավ ինձ և ներողություն խնդրեց իր պահվածքի համար, և շնորհակալություն հայտնեց իմ համբերատարության համար: Ինչպես հետո պարզվեց տվյալ աշակերտը նույն վարքն է ցուցաբերել նաև այլ ուսուցիչների հանդեպ: Իրավիճակը թուլացնելու և տվյալ սովորողի վստահությանը արժանանալու համար համադպրոցական հավաքույթներից մեկի ժամանակ աշակերտին հրավիրեցի պարի իր հանդեպ իմ դրական վերաբերմունքը ընդգծելու և նախորդ միջադեպը մոռացված համարելու նպատակով: Այդ իսկ օրվանից սովորողը սկսեց ինձ վսահել, անգամ որևէ խնդիր ունենալու դեպքում հաճախ մոտենում է ինձ, քննարկում խնդիրը, խորհուրդներ հարցում: Ես հավատացած եմ, որ յուրաքանչյուր աշակերտի պետք է ցուցադրել անհատական մոտեցում, քանի որ նրանցից յուրաքանչյուրը իրենց անհատականության ձևավորման շատկարեևորփուլի են հասնում հատկապես դեռահասության տարիքում, և լինելով ավագ դպրոցի ուսուցիչ այդ փաստը բավականին լուրջ և պարտավորեցնող է, քանի որ ուսուցիչն ինքը աշակերտի համար նույնպես հանդիսանում է վարքի կրկնօրինակման մոդել, ուստի շատ կարևոր է դեռահասին վերաբերվել հասուն մարդու նման և ընդգծել իր հանդեպ անհատական մոտեցումը:

Երկրորդ խմբային աշխատանքի դեպքում, որի թեման էր <<Եռանկյունաչափության տարրերը>>, 2 օր առաջ հրահանգեցի ձևավորել խմբեր, յուրաքանչյուր խումբ ընտրեց իր թիմի անվանումը, դրանք երեքն էին՝ <<Պյութագորաս>>, <<Դեկարտ>>, <<Պարաբոլ>>, որպես տնային աշխատանք պետք է ներկայացնեին իրենց թիմի անվանումը և նշանակությունը: Թիմերը ձևավորելուց մտածված երկու ագրեսիվ վարք ցուցաբերող աշակերտներին ներառել էի նույն խմբում, որպեսզի աշխատեն միմյանց հետ, ձևավորեն անձնային հարաբերություններ, ունենան քննարկում միմյանց հետ, աշխատեն որպես մեկ թիմ:

Յուրաքանչյուր թիմ բավականին բազմաբովանդակ ներկայացրեց իր թիմի աշխատանքը և անվանումը, պաստառների, սահիկաշարերի և երկրաչափական պատկերների միոցով, որոնք պատրաստել էին սեփական ձեռքերով: Ինձ համար շատ կարևոր է աշակերտների նախաձեռնողականությունը, ինքնություն աշխատանքը և ստեղծագործ միտքը, ինչի համար բոլորը ստացան բարձր գնահատական և գովասանքի խոսքեր: Այնուհետև սկսվեց մրցությային փուլը: Սահիկաշարի միջոցով բացվում էին առաջադրանենքրը, որոնցից յուրաքանչյուրը ունեն իրենց տրված միավորն ու ժամանակը:

Խմբային աշխատանքի ընթացքում համոզվեցի, որ երկու ագրեսիվ վարքագծով աշակերտներին նույն խմբում ընգրկելու միտքը հաջողվել է: Սովորողները համախմբվել էին մեկ գաղափարի շուրջ, մի կողմ դնելով իրենց բոլոր տարաձայնությունները և կենտրոնանալով լավ ներկայանալու և մրցությում հաղթելու վրա: Նրանց համգործակցությունը հիանալի էր ստացվել ինչը արտացոլվում էր նաև հետագայում դասապրոցեսների ընթացքում, քանի որ նրանց

միջև լարվածությունը բավական թուլացել էր: Այս փաստը արձանագրել է նաև դպրոցի հոգեբանը, ով ուսումնական տարվա սկզբում իրականացրել էր դասալսումներ և նկատել, որ տվյալ աշակերտներից մեկը հետաքրքրություն չի ցուցաբերում դասի ընթացքում, գրատախտակին մոտենալուց խուսափում է և առանձնապես չի շփվում դասընկերների հետ: Իսկ վերջին ժամանակներս նկատելիորեն փոխվել է սովորողի վարքագիծը, նա բավական հետաքրքված է իմ առարկայով, գրեթե միշտ պատրաստված է ներկայանում դասերն, արդեն կա շփում մնացած աշակերտների հետ և անգամ խոստովանել է, որ սիրում է մաթեմատիկան:

Տվյալ փորձը համարում եմ ստացված քանի որ ինձ հաջողվեց դրական կապ ստեղծել այս աշակերտի հետ, հասկանալով և հաշվի առնելով իր անհատական առանձնահատկությունները, և ուրախ եմ, որ ստացվել է նաև թուլացնել երկու աշակերտների միջև եղած լարվածությունը, որը ինչպես նշել էի ուներ ավելի խորքային հիմքեր:

Ա. Բասսի և Ա. Դարկի<<Ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման>>մեթոդկիա



Ա. Բասսի և Ա. Դարկ <<Ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման>>մեթոդկիան անցկացրել եմ 10-րդ դասարանի աշակերտների հետ: Դասարանում սովորում են 15 աշակերտներ, այս մեթոդիկայի արդյունքները միշակելիս պարզ դարձավ աշակերտներ մոտ ագրեսիայի տեսկաների տոկոսային հարաբերությունը: Ըստ այդ արդյունքների պարզ դարձավ որ, 15 աշակերտների մոտ ֆիզիկական ագրեսիան կազմում է 6%, վերբալ ագրոսիա՝ 0%, անուղղակի ագրեսիա՝ 10%, նեգատիվիզմ՝ 0%, նյարդայնություն՝ 12%, կասկածամտություն՝ 0%, վիրավորանք 0%, ինքնաագրեսիա 6%:

Ըստ մեթդոկայից ստացած տվյալների դասարանում ագրեսիայի մակարդակը բավականին ցածր է, և աշակերտները ընդգծված բացասական վերաբերմունք չունեն միմյանց նկատմամբ: Միայն ֆիզիկական ագրեսիան, անուղղակի ագրոսիան, ինքնաագրեսիան և նյարդայնությունն էին միփոքր ընդգծված, ինչը իմ հիմնականում արտահայտվում էր նշված երկու ածակերտների մոտ: Ընդանուր աշխատանքների իմ և մնացած ուսուցիչների հոգատար և ուշադիր վերաբերմունքի շնորհիվ այժմ նման խնդիրներ գրեթե չկան իսկ լինելու դեպքում շատ արագ հարթվում են:

Եզրակացություն

Ամենօրյա աշխատանքի արդյունքում դիտարկելով աշակերտների վարքը եկա այն եզրակացության, որ ընտանիքը, մշակութը, միջավայրը, իրենց հանդեպ վերաբերմունքը ձևավորում է աշակերտների վարքը, և այս գործում մեծ է կրթական համակարգի դերը: Առաջնային է աշակերտերի մեջ իրական արժեքների ներդնումը, որպես նոր ձևավորվող անձնավորություններ: Կարևոր է աշխատանքը ուղղված կարծրատիպերի կոտրմանը, քանի որ դպրոցական տարիքում հեշտ է ազդել սովորողի կարծիքի վրա, և դրա ազդեցությունը նկատելի փոփոխվող վարքն է, որը բավական անկանխատեսելի է: Հատկապես դեռահասության շրջանում աշակերտենի նհամար առաջնային են դառնում ընկերները և նրանց կարծիքը: Սովորողի վստահությանը արժանանալու համար պետք է հաշվի առնել այս և մի շարք առանձնահատկություններ, որպեսզի դեռահասը իրեն զգա ապահով և վստահելի միջավայրում, հատկապես դպրոցում, քանի որ իր ժամանակի մի զգալի հատված անցկացնում է դասընկերների և ուսուցիչների շրջապատում:

Ես եկա այն եզրահանգման, որ դեռահասների մոտ ագրեսիան և ինքնաագրեսիան կարող են առաջանալ բազմազան պատճառներից, իհարկե անիրական է պատկերացնել, որ այդ ամենը միայն ուսուցչի աշխատանքի շնորհիվ կարող է շտկվել, բայց նաև համոզված եմ, որ ճիշտ և հոգատար վերաբերմունքի շնորհիվ կարող ենք ազդեցություն ունենալ դեպի դրական տեղաշարժի վրա: Տվյալ դեպքում իմ կողմից դասավանդվող դասարանի երկու աշակերտների մոտ նկատվեց դրական տեղաշարժ, չեմ կարող ասել, որ նրանք դաձան ընկերներ, սակայն և ես, և դպրոցի մնացած ուսուցիչները կփաստեն, որ սկզբնական ագրեսիվ վերաբերմունքը միմյանց նկատմամաբ բավականին փոփոխվել է: Եվ մեծ ձեռքբերում եմ համարում նշված աշակերտներից մեկի նկատելի վերաբերմունքի փոփոխությունը ինձ հետ շփման մեջ, քանի որ ամիսներ տևած աշխատանքի և քննարկումների շնորհիվ հաջողվեց ձևավորել վստահության և հոգատարության միջավայր տվյալ աշակերտի համա: Այս դեպքում նկատելի են և վարքային դրական փոփոխությունները և ուսման հանդեպ հետաքրքրության առաջացումը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Արզումանյան Ս. Ջ. , Դեռահասների խաթարումների պատճառները և դրանց հաղթահարման ուղիները, Եր., 1991թ.
2. Արզումանյան Ջ. Ս. Դեռահասների խաթարումների պատճառները և դրանց հաղթահարման ուղիները, Եր., 1991 թ.
3. Պետրովսկի Ա. Վ., Տարիքային և մանկավարժական հոգեբանութուն, Երևան, 1991թ.
4. Ա. Ա. Նալչաջյան <<Ընդհանուր հոգեբանության հիմունքներ>>, Երևան <<Լույս>> 1991